ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 հուլիսի 2024 թվականի № 277-Ա

ԼԵՎՈՆ ՆԱԶԱՐԵԹՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածի, 164-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի՝ 2023 թվականի դեկտեմբերի 29-ի № 472-Ա որոշումը և *Լևոն Նազարեթյանի*՝ 2024 թվականի հունիսի 28-ի № 17 դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Ալափարսի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն ***Լևոն Նազարեթյանին*** տրամադրել 2024 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդից՝ տասը աշխատանքային օր՝ 2024 թվականի հուլիսի 15-ից 26-ը ներառյալ:

2. ***Լևոն Նազարեթյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Ալափարսի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության հաշվապահ ***Թամարա Նարիմանյանի*** վրա:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Ալափարսի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ ***Թամարա Նարիմանյանին*** և «Չարենցավանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն ***Գառնիկ Սահակյանին*** ապահովել «Ալափարսի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության սպասարկման տարածքի բնակչության առաջնային բժշկական օգնության և սպասարկման իրականացումը՝ «Չարենցավանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության համապատասխան մասնագետի *(ընտանեկան բժիշկ՝ Էլենա Մնիչյան)* կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՄԱՀԱԿՅԱՆ

2024 թվականի հուլիսի 3
ք. Հրազդան